

զօրութեան դէմ դնել. մեր բերդերը ամրացեալ չեն բաւականին ինչպէս կարծէինք, բաւական պաշար չունինք եւ ոչ պէտք եղածին չափ պահապան. եւ այս պատճառներուն համար պէտք է, որ դու երթաս անձամբ Բուղայի, որ ապստամբութեան կարծիքը վրայեղ, վերնա, եւ խեղճ ժողովուրդը, որ գաղթականութեամբ եկել հոս ամրացել է, իւր տեղ կարենայ դառնալ եւ երկրիս ասպատակութիւնը ղադրի. վասնզի աշխարհքս ահա կործանեցաւ: Եւ եթէ քու կամօքդ երթաս՝ թերեւս շատերու եւ քու անձիդ օգտակար լինիս, վասնզի կարելի է, որ գուցէ ականմայ երթալովդ քեզի էլ, ուրիշներուն էլ վնաս հասցնես»: Դոցայ այս սպանալիքներէն ու դաւաճանութենէն պարտաւորեալ Աշոտ, մահիւ աչքն առնելով գնաց վիրագին, սոցայ մատնութեամբ եւ առաջնորդութեամբ դարձեալ Գուրգէն նորա եղբայրն անձնատուր եղաւ: Բոլոր Հայաստան գիտէ թէ ի՞նչ հետեւանք ունեցաւ Վասպուրական աշխարհի համար այս երկու եղբարց գերութիւնը, ինչչա՛րի անմեղներ սրոյ եւ գերութեան մատնեցան, ինչչա՛րի ողորմելիներ ուրացութեամբ եւ հոգւոյ կ'որսայ եամբ իրենց կեանքն ազատեցին, եւ. աս ամէնքը՝ որովհետեւ այս երեք իշխանագունք զինուորական օրինաց մատնիչ եղան վատութեամբ, տիրադաւ եղան իրենց տէրը մատնեցին, իրենց բարերարներու երախտեաց ապերախտութեամբ պատասխանեցին:

Աշոյ փախստականներէն ծեր դատաւոր մը, որ ամէնուն յայտնի էր իր արդարակորով բնութեամբ եւ ուղղութեամբ հարցուց աս մեր երեք ամբաստանելոց թէ ի՞նչ պատասխան ունէին: Իսկ նոքա երեքը միաբերան ուրացան իրենց Բուղայի մատնութեան նամակ գրելն. իսկ միւս խօսակցութիւններն Աշոտի հետ՝ յայտնի չարակամութեան նշան համարեցան եւ կը պնդէին թէ Նկանի բերդը իրօք կարողութիւն չունէր դիմանալու: Եւ քաջալերեալ, որովհետեւ օտար ու պատկառելի կերպարաններ կը տեսնէին դատաւորաց մէջ, սկսան ամբաստանել զհովնան իբրեւ խարդախ եւ դաւաճան, որ իրենց կենաց դէմ թշնամութեամբ գրգռուած՝ ո՛ր գիտէ ուստի, զիրենք կապանաց եւ բանտի մատներ էր ամենայն դիւական նենգութեամբ, եւ իրենց ձեռաց եւ ոտից կապերու տեղուանքը ցոյց կ'ուտային.